

ԵԶՆԻԿԻ ԲՆԱԳՐԱՅԻՆ ՍՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Փարիզ, 1959, հշ 17, Ե. 1-11. Վեներսիկ, 1826, հշ 26)

Նա եւ զմարդիկ ճեսանեմք զի ի չգոյե առնեց ինչ. որպէս շի-
նաւորդ ոչ ի քաղաքաց քաղաքա առնեց եւ ոչ ի քանաքաց քանաքա:

Նոքա քանգի ամենեւին յոյնչե Բ Դկարեն¹ ինչ առնել, քարինքն՝
զոր ի շինուածսն յարինքն՝ < քեպեք եւ շինաւալացդ ընթերակաց
իցեց բնութիւնք զոր ի շինուածսն յարինքն >², ոչ Բ եւս Դ³ քարինք
Դկոյինք Դ⁴, այլ կամ քալաք կամ քանաք. զի ոչ եթե բնութիւնք⁵
զորեքեք քաղաք կամ քանաք, այլ արուեստն՝ որ ի բնութեանքն է: Եւ
արուեստն ոչ եթե յընթերակաց ինչ իմեք քեք՝ որ ի բնութիւնքն իցեք:

< Եւ արուեստագետն ոչ եթե քարուեստ ինչ ընթերակացք՝ որ
ի բնութիւնքն իցեք > առնու զարուեստգիտութիւնք, այլ ի դիպացն
որ դիպին ի բնութեանքն (Եզնիկ, 1959, էջ 17, Ե. 1-11, Վեներսի-
կ, 1826, էջ 26):

Ինչպէս երեւում է ապագրական պայմանական նշաններից և առ-
ուեստ մեր տողատակ ծանոթագրութիւններում, Մարիէսն այստեղ բնա-
գրային փոփոխութիւններ է կատարել ձեռագրի բնագրի մէջ, ի հարկէ
ամէն տեղամ գրանք պատճառաբանելով համապատասխան ծանոթագրու-
թիւններին մէջ: Մէկ առ մէկ քննենք այդ փոփոխութիւնները:

1. Առաջին փոփոխութիւնը կատարուած է ձեռագրի հետեւաւ
տողում.

Նոքա քանգի ամենեւին յոյնչե չկարեն ինչ առնել... (էջ 17.3):

Մարիէսը մեր ընդգծած բայը դարձրել է հաստատական: Պատ-
ճառաբանութիւնը արուած է Եզնիկի՝ նրա գիտական հրատարակութեան
87րդ ծան. մէջ. «Ջնջել չկարեն բայի չ-ն». դեռեւս 1924 թ., սրանից
30 տարի առաջ մենք զգում էինք, որ պէտք էր այդ անել, Հմմտ.
Մարիէս De Deo, էջ 125»: Իրօք, այս էջում նա գրել է. «(Մեթոդիստի)
յուշարէն բնագրի հետ այս նախադասութիւնը համաձայնեցնելու համար
պէտք էր ինչպէս ջնջել ժխտական մասնիկը»¹: Ի միջի այլոց հարց
ենք տալիս. ինչո՞ւ եզնիկի նախադասութիւններն անպայման համա-
ձայնեցնել Մեթոդիստի երկի մօտաւորապէս համապատասխան տեղին,
քանի որ եզնիկը յատ տեղամ բառացի կամ տողացի չի հետեւել իր այդ
աղբիւրին: Մտորել կը տեսնենք, որ եզնիկի այդ նախադասութիւնն իր
համապատասխանը չունի Մեթոդիստի երկում: Բայց անմիջապէս յա-
ջորդ տողում Մարիէսը աշխատել է արդարացիել ձեռագրի ընթերցուա-
ծը. «Բայց չկարենի չ-ն միանգամայն առկայ է ձեռագրում, և մենք

¹ Ձեռագրում՝ «չկարեն»:

² < > մէջ առնուած բառերը Մարիէսի կողմից են աւելացուած:

³ Ձեռագրում՝ «և»:

⁴ Ձեռագրում՝ «դիւն»:

⁵ Ձեռագրում՝ «բնութեան»:

⁶ Ձեռագրում՝ «գործ է»:

⁷ Mariès L., De Deo, 1924, p. 125: «Pour faire cadrer cette phrase avec le grec, il faudrait précisément supprimer la négation».

չենք համարձակուամ այն ջնջել: Իսկապէս, ըստ երեւոյթին Եզնիկը ցանկացել է այստեղ տարբերել *ex nihilo sui et subiecti* ստեղծելու աստուածային բացարձակ զօրութիւնը՝ *ex nihilo subiecti* մի բան ստեղծելու մարդկային յարաբերական զօրութիւնից. սրով և հետեւեալ սահմանափակումը՝ «Նոքա քանզի ամենեւին յոչնչէ չկարեն ինչ առնել»²: Հասանաբար Մարիէսի այս պատճառարանութիւնն աւելի ճիշտ է, քան չ-ն ջնջելու օգտին գրածները գիտական հրատարակութեան 87րդ ծան. մէջ:

Ըստ Մարիէսի, չ-ն բնագրի մէջ մտնելով ինչ-որ սրբագրիչի ձեռքով՝ պատճառ է դարձել, որպէսզի այն տեսակէտը, որ Մեթոդիոսի հետեւողութեամբ Եզնիկն ուղեցել է ապացուցել, ժխտուի: Ըստ Մարիէսի, վերեւում մեր մէջ բերած պարբերութեան և շարունակութեան մէջ Եզնիկը ցանկացել է ապացուցել, թէ մարդիկ էլ կարող են աշնչից մի բան, մի արարած (*un être*) ստեղծել, այն է՝ արուեստը, և իբր այս մտքի հաստատումն է պարբերութեան վերջին նախադասութիւնը՝ «Ուստի զարուեստն յոչնչէ ի մարդիկ պատշաճեալ հարկ է ասել» (Գիտ. հրատ., էջ 17-16): Ծի՞շտ է արդեօք Մարիէսը. կարելի՞ է ասել, թէ արուեստը արարած է: Եւ Մարիէսը գտնում է, որ Եզնիկի այս վերջին նախադասութիւնը հաստատումն է խնդրի ուսարկայ «Նոքա քանզի ա-մենեւին յոչնչէ լ կարեն ինչ առնել» մտքի: Եթէ այդպէս է, մտածել է նա, ապա ինքն իրաւացիօրէն է սրբագրել ձեռագրի սչկարեն» բայը:

Որո՞նք են Մարիէսի սրբագրութիւնից և պատճառարանութիւնից բխող հետեւութիւնները. 1) Նոյնիմաստ են դառնում Եզնիկի հետեւեալ նախադասութիւնները. «Նա և զմարդիկ տեսանեմք զի ի չլոյլե առնեն ինչ» և «Նոքա քանզի ամենեւին յոչնչէ լ կարեն ինչ առնել» (էջ 17. 1, 3). հետեւաբար նոյնիմաստ են դառնում նաև «Ի չգոյէ» և «ամենեւին յոչնչէ»: 2) «Ամենեւին» բառը չի աստկացնում «յոչնչէ» բառի իմաստը: 3) Նոյնիմաստ են հետեւեալ նախադասութիւնները. «Նոքա քանզի ամենեւին յոչնչէ կարեն ինչ առնել» և «Ուստի զարուեստն յոչնչէ ի մարդիկ պատշաճեալ հարկ է ասել» (էջ 17. 3, 16). այսինքն՝ մարդիկ ամենեւին աշնչից են ստեղծել արուեստը³: Հետեւաբար վերջին երկու նախադասութիւններում նոյնիմաստ են «կարեն առնել» և «պատշաճեալ է»:

Մարիէսն աշխատել է բացատրել մեր նշած հետեւութիւններից մի քանիսը: Առաջին հետեւութեան մասին նա գրել է. «Մեր կարծիքով, Եզնիկը տարբերութիւն չի դնում ի չլոյլե և յոչնչէ (նախկնորութիւնների) միջև: Մեթոդիոսը է՛ն ո՛ւն օտար պարզ արտայայտութիւնը Եզնիկի երկում արտայայտուած է յոչնչէ եւ ի չլոյլե (բառերով)» (ծանո., 87): Մարիէսը չի բացատրել Մեթոդիոսի գործածած բառը. թերեւ նա ինքնին, մենակ արտայայտուած է Եզնիկի երկու բառերի իմաստը: Ի՞նչ էլ լինի, դա դեռ բաւական հիմք չէ, որպէսզի յայտարարենք, թէ Եզնիկի համար նոյնիմաստ են «Ի չգոյէ» և «յոչնչէ»: Եթէ դրանք նոյնիմաստ լինէին, Եզնիկն իր երկի առաջին իսկ էջերից չէր գրի. «(Աստուած) ածն ի չլոյլե ի գոյ զչգոյսն և հցոյց յոչնչէ յինչ զչէսն» (Թ. 24-25), կամ՝ «արար Աստուած զաշխարհս ... յոչնչէ և ի չլոյլե» (16: 33) և այլն: Եթէ նոյնիմաստ լինէին «Նա և զմարդիկ տեսանեմք զի ի չլոյլե առնեն ինչ» (որպէս չինաւղբող ոչ ի քաղաքաց քաղաքս՝ առնեն և ոչ ի աստուարաց տաճարս) և «Նոքա քանզի ամենեւին յոչնչէ՝ կարեն ինչ առնել,

² Mariès L., *De Deo*, 125.

(Դրանքի քարինքն...)» նախադասությունները, յատկապես նրանց Վի
չգոյէ առնեն» և ճամնեակին յոչնչէ կարեն ինչ առնել» արտայայտու-
թիւնները, եզնիկը աւելորդաբար չէր կրկնի նոյն միտքը երկրորդ
նախադասութեան մէջ, այլ առաջինին անմիջապէս կը կցէր երկրորդի
գտնիքի քարինքն...» շարունակութիւնը (վերևում տե՛ս ոմբողջ հատ-
ուածը): Չարմանում ենք, թէ ինչպէ՛ս եզնիկի թարգմանիչ Մարիէսը
գրիւ է, թէ եզնիկի համար նոյն իմաստն են արտայայտում «յոչնչէ»
և Վի չգոյէ», որ նա ճիշտ է թարգմանել «du néant et du non-existent»
(եզնիկի Յորնոս. թարգմ., էջ 20): Մարգրիկ (խօսքը նրանց մասին է)
կարող են չհղած տեղից մի բան ստեղծել, օրինակ՝ չեղած տեղից քա-
ղաքներ կամ տաճարներ շինել, ինչպէս եզնիկն է գրիւ. բայց նրանք
չեն կարող ոչնչից քողաքներ կամ տաճարներ շինել: Մեզ թւում է, որ
այդ իսկ պատճառով եզնիկը երկրորդ նախադասութեան մէջ գրիւ է.
«Նոքա քանիք ամենեւին յոչնչէ չկարեն ինչ առնել...» (Վիանի որ
նրանք ամենեւին ոչնչից չեն կարող բան ստեղծել...):» Եթէ մարդիկ
Վի չգոյէ է յոչնչէ» (այս բառերն առնելով իրենց իսկական իմաստնե-
րով և թէկուզ մի կողմ թողնելով «ամենեւին» իսկապատշաճիչ բարձր)
կարեւորային արարած կամ որեւէ բան ստեղծել, ապա ի՞նչ տարբերու-
թիւն կը մնար նրանց և Աստուծոյ միջև:

Մարիէսի սրբադրութիւնից մեր հանած Չրդ հետեւութեան, այն է՝ «ամենեւին» բառի իմաստի մասին, Մարիէսն ինքը գրել է. «Մեր կարծիքով, ամենեւին մակբայը չլիլ և ոչինչ բառերի միջև տարբերութիւն առաջացնելու համար չի դրուել յոյնիցից առաջ» (Գիտ. հրատ., ծան. 87). Այլ, գրել է նա, «եթէ այդ մակբայը իսկապէս հեղինակային է» (authentique), սկզբից եւեթ ուժեղ կերպով հաստատուէ է այն տեսակէտը, որ ապացոյցանելու է այդ սրբադրութեան մէջ. այն է՝ մարդը կտորոզ է ոչնչից, բացարձակապէս ոչնչից ստեղծել մի բան, այսինքն՝ արտեւարը: Այս պատճառաբանութիւնը համոզիչ է. մեր կարծիքով ամենեւին յոյնից = ամենեւին, բոլորովին ոչնչից, միանգամայն ոչնչից: Եթէ ճիշտ ենք հասկանում Մարիէսի գրածը, ըստ նրան՝ «ամենեւին» մակբայը վերաբերում է նրա սրբագրած՝ հաստատական դարձած «կարեւն» բային: Եթէ այդպէս լինէր, կարծում ենք, որ Եղիշի այդ մակբայը հենց այդ բայից առաջ խնդրի մի կողմն էլ այն է, որ Մարիէսը չափուէ համարը Բայց նա խնդրի մի կողմն էլ այն է, որ Մարիէսը «կատարածում է այդ մակբայի հեղինակային լինելու մասին. նա գրել է. «Առաջինը՝ եթէ ամենեւինը հեղինակային է, որովհետեւ կարող է պատահել, որ այն աւելացուած լինի կաւեմից առաջ և աւելացրած ոչ խնդրից սրբագրելի կողմից, որ դայթակցուել է այն մաքից, թէ մարդը կարող է ոչնչից մի բան ստեղծել» (Գիտ. ձրատ., ծան. 87): Եթէ Մարիէսի պէս դատենք, ապա ցանկացած բառի հեղինակային լինելու մասին կարելի է կասկածել և դուրս հանել բնագրից՝ մեր առաջարկած սօին կարելի է կասկածել և դուրս հանել բնագրից՝ մեր առաջարկած դայթակցից մաքին, թէ մարդը կարող է ոչնչից մի բան կամ արարած ստեղծել, մենք արդէն դրա մասին մեր կարծիքը յայտնեցինք:

Գանձը Մարիէսի սրբադպրութիւնից մեր հասած Յրդ հետաւորացու-
ի բր Եզնիկի շնորհ քանգի ամենեւին յաշնչէ Լ՝Ղկաբեն ինչ առնելու մտքի
հաստատումն է խնդրի առարկայ պարբերութեան հետեւեալ եզրակացու-
թիւնը. «Ուստի զարուեստն յաշնչէ ի մարդիկ պատշաճեալ հարկ է ա-

տեղ» (17.16)։ Այսինքն՝ մարդիկ ոչնչից են ստեղծել արուեստը⁹), որ Մարիէսը համարում է արտաբնական, Մարիէսը կանխել է այն առարկաները, որ կարող էր քննադատան անել։ Եզնիկը գրել է «արուեստան յոչնչէ ի մարդիկ պատճառման հարկ է ասել» և ոչ թէ «արուեստան ի մարդկանէ արտեալ ի յոչնչէ», ինչպէս սպասել էր տալիս Մարիէսի սրբագրած նախադասութիւնը՝ մարդիկ «ամենեւին յոչնչէ կարեն ինչ առնել»։ «Թերեւս առարկան, — գրել է նա, — թէ ի մարդիկ պատճառման արտեալ ի մարդկանէ չէ»։ Եւ նա աշխատել է ցոյց տալ, թէ Եզնիկի նախադասութեան մէջ «պատշաճեալ» քերական է գործածուած «Բայց, — գրել է նա, — ապացուցման ընթացքում աշխատեցինք ցոյց տալ, որ այն, ինչ մարդիկ ստեղծում են ոչնչից, արտաբնական-արուեստան է (l'êtré-accident-art), որ այլ գոյացութիւն (êtré) չունի, եթէ ոչ այն նիւթի (substance) գոյացութիւնը, որին նա ներդրուել է (adherent, in-est), յարմարում է, ճիշտ է գալիս, և հետեւաբար պատճառման¹⁰ բայը, որով Առաքեալ Բ. 30, ԺԹ. 14-ում թարգմանուել է յուսնարէնի ἀρροῦν, այստեղ շատ յաճախ է գալիս։ Եզնիկի կրկնում պատճառման համապատասխանում է Մեթոդիոսի πεφασθῆναι γίνεσθαι (Գիտ. հրատ., ծան. 87)։ Մինք էլ Մարիէսի պէս արտայայտուելով կարող ենք ասել, որ եթէ «պատշաճեալ» բառը հեղինակային է, ապա կասկած չկայ, որ տեղին է գործածուել Եզնիկի նախադասութեան մէջ։ Բայց անկեղծօրէն խոստովանում ենք, որ Մարիէսի պատճառաբանութեան էությունը չենք ըմբռնում։ Մեզ համար յստակ չէ նաև «պատշաճեալ» բառի նշանակումը, Մեզ համար յստակ չէ նաև «պատշաճեալ» բառի բառարաններում «պատշաճիմ» բայը բացատրուած է «յարմար-ցուել, յարմարել»։ Եզնիկի նախադասութիւնը կը նշանակէր. «Ուստի հարկ է ասել, որ արուեստը ոչնչից է յարմարուել մարդկանց», որ նոյն է Մարիէսի Ֆրանս. թարգմանութեան հետ. «D'où force est bien de dire que c'est du non-être que l'art est venu s'ajuster aux hommes»։ Եզնիկի համար ինչպիսին էլ եղած լինի «պատշաճեալ» բառի բուն իմաստը, կարծում ենք, որ այն ունի մեղմ պէտք է եղած լինի քան «առնել» = ստեղծել, քանի որ հեղինակը չի գրել ուղղակի, թէ մարդիկ ամենեւին ոչնչից են ստեղծել արուեստը։

Ինչպէս տեսանք վերևում, ըստ Մարիէսի, քննարկելով պարբերութեան մէջ Եզնիկին աշխատել է ապացուցել այն տեսակէտը, թէ մարդիկ կարող են բացարձակապէս ոչնչից արուեստ-արտաբնական ստեղծել։ Պէտք է ընդունել, որ Եզնիկի այդ պարբերութեան մտքերի ազդեցութեամբ, բուն իմաստն իր ներքինիներով այնքան էլ յստակ չէ, ինչպէս կը տեսնենք ստորև, և Մարիէսն էլ դարձաւ իր սրբագրութիւններով միջամտել է ձեռագրի բնագրին՝ ի հարկէ յստակութիւն մտցնելու նպատակով։

Լոկ նկատի առնելով Եզնիկի պարբերութեան վերջին նախադասութիւնը՝ «Ուստի զարուեստն յոչնչի ի մարդիկ պատշաճեալ հարկ է ասել», ճիշտ չէր լինի յայտարարել, ինչպէս Մարիէսն է արել, թէ ըստ Եզնիկի մարդիկ բացարձակապէս ոչնչից են ստեղծել արուեստը կամ արհեստը¹⁰։ Ուղիւստի դատողութեամբ կարող ենք տեսլ, որ մար-

⁹ Ինչեւ «պատշաճեալ» և ոչ «պատշաճիմ»։

¹⁰ Գրաբարում «արուեստ» բառը նշանակում է նաև «արհեստ»։

դիվ թէն չհղած տեղից, «ի չգոյէ» են ստեղծել արուեստը, որովհետև արուեստը բնութեան օրէնքներէ պէս մարդուց անկախ գոյութիւն չունի, ոչ էլ ճանաչողութեամբ է, ինչպէս ուսուցում է Եզնիկը այդ պարբերութեան մէջ («Ոչ եթէ անձնաւոր ինչ յանձնաւորաց զարուեստն կարէ (ոք) ցուցանել», որովհետև «արուեստն չէ, եթէ ոչ նախ մարդն իցէ» (Եզնիկ, նոյն տեղում)։ Բայց չի կարելի ասել, թէ մարդիկ ոչնչից, «յոյնչէն» են ստեղծել արուեստը կամ արհեստը. նրանք ստեղծել են իւրեանց փորձից, որ գործադրուել է աշխատանքի ընթացքում բնութեան վրայ, ինչպէս Եզնիկն է գրել այդ պարբերութեան մէջ՝ «ի դիպացն որ դիպինն. որպէս ի դարբնութիւնէ դարբինն և ի հիւսնութիւնէ հիւսնն» (17-13)։ Ուստի մեր կարծիքով ճիշտ չէր լինի ասել, թէ մարդիկ բացարձակապէս, ամենեւին ոչնչից են ստեղծել արուեստը։ Մարդու և արուեստի միջև միջակայ օղակը բնութիւնն է՝ մարդ - բնութիւն - արուեստ։ Այս բոլորը դիտէր անշուշտ Եզնիկը։ Ձեռագործ կարգում ենք մեզ հետքերը պարբերութեան մէջ. «Քարինքն, զոր ի շինուածսն յաւրինն (շինաւդն), ոչ ևս քարինք կոչին, այլ կամ քաղաքք կամ տաճարք, զի ոչ բնութիւնն գործէ քաղաքս կամ տաճարս, այլ արուեստն, որ ի բնութիւնն է»։ Եզնիկի երկում «բնութիւն» բառը մի քանի իմաստ է արտայայտում. «որդնակիւմ»՝ «տարբերք», եզակիւմ»՝ «բնոյթ», էութիւն, մի բան, արարած ...»։ Նշանակում է արդեօք նաև «մեզ չըբջապատող բնութիւնը, մայր բնութիւն»։ Մեր բերած նախադասութեան մէջ ի՞նչ իմաստ ունի։ Մարիէսը թարգմանել է «nature» բառով. «... parce que ce n'est point la nature qui fait villes et temples, mais l'art qui est dans la nature» (Eznik, §. 15)։ Հակառակ իր սովորութեան, Մարիէսը փակագծերում չի պարզաբանել «nature» բառի իմաստը։ 88րդ ծան. վերջին տողում միայն կռահում ենք, որ նա նկատի ունի քարերի բնութիւնը՝ «la nature, բնութիւն, des pierres»։ Մարիէսը նշում է, թէ Եզնիկը Միթոդիոսի յուսարէն ո՛ր նախադասութիւնն է հայացրել մեր մէջ բերած տողերում, և պարզում է, որ «բնութիւն»ը համապատասխանում է յունարէն «ύστω» բառին, որ Մարիէսը իր De Deo աշխատութեան մէջ (էջ 123) թարգմանել է «substance», բայց ոչ «nature»։ «Ի բնութեանն» բառը Եզնիկի նախադասութեան մէջ կարող է նշանակել կատուցուած քաղաքներն ու տաճարները. հմմտ. հետեւալ նախադասութիւնը. «Այդ այնմ նման է, յորժամ ի քարանց ոք շինուածս առն իցէ, պատշաճելոյն և յարինելոյն միայն արարիչ է, և ոչ բնութեանն» (Եզնիկ, 18. 24-25)։ Ուստի «արուեստն որ ի բնութեանն է» վերոյիշեալ նախադասութեան մէջ բնութիւն բառը նշանակում է հաւանաբար «արուեստը, որ ներդրուած է այդ շինուածքների մէջ», և ոչ թէ «մայր բնութեան մէջ»։

Մենք այս բոլորով ուղեցինք, որ ընթերցողն էլ մեզ պէս կասկածէր, թէ Եզնիկի վերոյիշեալ նախադասութեան մէջ «բնութիւն» բառը չէ՞ր կարելի արդեօք հասկանալ որպէս «մայր բնութիւն», և «արուեստն ... ի բնութեանն է» միտքը մեկնարանել որպէս այն, թէ մարդիկ բնութեան միջոցով են ստեղծել արուեստը, ինչպէս մենք վերեւում ասում էինք։

2. Կիսալեզուական և կիսաբանասիրական այս խորհրդածութիւններէից վերադառնալով Եզնիկի պարբերութեան սկզբին և տեսնելով Մարիէսի շրջ. արքայութիւնը։ «Նոքա բնակի ամենեւին յոչնչէ Դ Մ կարեն

ինչ առնել, քարինքն՝ զոր ի շինուածան յաւրիննն՝ < թեպէտ և չի նաւադացդ ընթերակաց իցեն բնութիւնք զոր ի շինուածան յաւրիննն > ոչ ևս քարինք կոչին, այլ կամ քաղաքք կամ տաճարքք»։ Առաջմ մի կողմ թողնել < > ներք մէջ առնուած բառերը, որ Մարիէսն է աւակացրել։ Մենք ընդգծեցինք «քանդի» ստորագրասական շողկապը, որ «նոքա քանդի ամենեկին յոչնչէ (շ)կարեն ինչ առնել» նախադասութիւնը դարձնում է հիմունքի պարագայ, հիմունք կամ հիմք յաջորդ նախադասութեամբ արտայայտուած եզրակացութեան համար։ Անկախ Մարիէսի «կարեն — կարեն» սրբազրութիւնից, մենք չենք տեսնում հիմունքի և եզրակացութեան կապը. «Քանի որ նրանք (այսինքն՝ մարդիկ, շինարարները կամ ճարտարապետները) չեն կարող (Մարիէսի սրբազրութեամբ՝ «կարող են») ամենեկին ոչնչից մի բան (Մարիէսի մեկնաբանութեամբ՝ «մի արարած») ստեղծել, քարերը, որ շինուածքներին մէջ են ագուցում, այլևս քարեր չեն կոչուում, այլ կամ քաղաքներ կամ տաճարներ»։ Ահա Մարիէսի թարգմանութիւնը. «Eux, parce qu'absolument du non-être ils peuvent créer de l'être, les pierres qu'en leurs constructions ils agencent... plus ne s'appellent pierres mais ou villes ou temples» (Eznik, § 15)։ Թարգմանութեան իմաստը նոյն է մերի հետ։ Ինչո՞ւ է եզնիկն իր նախադասութեան սկզբում գործածել «քանդի» բառը։ Ինչպէս տեսնում ենք, Մարիէսի թարգմանութեան մէջ, նոյնիսկ նրա «կարեն — կարեն» սրբազրութիւնից յետոյ, մեր հարցումի պատասխանը չենք գտնում։ Հետեւաբար նրա սրբազրութիւնը չի նպաստում ճառարի լուսաբանման, այլ միայն իբր հաստատած է ինքնու Մարիէսի այն յայտարարութիւնը, թէ, ըստ եզնիկի, մարդիկ ամենեկին ոչնչից են ստեղծել արուհառը։ Հետեւաբար եթէ սրբազրութիւնը մնում է աննպատակ, մենք նախընտրում ենք անփոփոխ թողնել ձեռագրի «կարեն» ընթերցումը, որով՝ «նոքա քանդի ամենեկին յոչնչէ չկարեն առնել ինչ = Քանի որ նրանք չեն կարող ամենեկին ոչնչից մի բան ստեղծել...»։ Մեր կարծիքով հենց սա է եզնիկի միտքը։ Սակայն այս չով գեղեւ կապ չի ստեղծուում հիմունքի և «քարինքն»... ոչ ևս քարինք կոչին...» եզրակացութեան միջև։ Դարձեալ ինչ—որ բան պակասում է, և մեզ թւում է, որ մեր եզրակացութիւնն համարածը ըսեն եզրակացութիւնը չէ տուելու հիմունքի։ Ըստ մեզ, այդ եզրակացութիւնը բնագրից դուրս է ընկել։ Մենք առաջարկում ենք եզնիկի նախադասութիւնը սրբագրել մօտաւորապէս հետեւեալ կերպ.

«Նոքա քանդի ամենեկին յոչնչէ չկարեն ինչ առնել, < (ի բնութեմ) բնութեակաց (առ ձեռն) ունին քարինա. բայց > քարինն ոչ եւս քարին կոչին, այլ կամ քաղաք կամ տաճար, զի ոչ եթէ բնութիւնն գործէ քաղաքս կամ տաճարս, այլ արուհառն...»։ Այսինքն՝ քանի որ մարդիկ ամենեկին ոչնչից չեն կարող մի բան ստեղծել, առեալ գէպը կամ քաղաքներ կամ տաճարներ կառուցել¹¹, ուստի ընթերակաց կամ առ ձեռն ունեն բնութիւնից արուած քարեր, բայց այդ քարերն այլևս քարեր չեն կոչուում, այլ կամ քաղաքներ կամ տաճարներ կառուցելը քարեր հայթայթած բնութեան քաղաքներ կամ տաճարներ կառուցելը քարեր հայթայթած բնութեան գործը չէ։ () — ներում դրեցինք «ի բնութիւնն», որովհետեւ վստահ չենք, թէ եզնիկի երկում «բնութիւնն» բառը կարող է գործածուել

¹¹ Սրանից անմիջապէս առաջ եզնիկը գրել է. «Նինաւդդ ոչ ի քաղաքաց քաղաքս առնեն և ոչ ի տաճարաց տաճարս»։

«մայր բնութիւն» իմաստով. գրաբարի բառարաններն այդ իմաստը չեն տալիս: Եթէ այդ իմաստը կայ Եզնիկի երկում, ապա պէտք է նոյն իմաստն ունենայ նաև նրա գործածած «(զի ոչ եթէ) բնութիւնն (գործէ)» բառը այդ նախադասութեան մէջ: Մենք այնուհանդերձ ()-ներում դրեցինք «ի բնութիւնէ» բառը, որովհետեւ կարծում ենք, որ գրա յարմար արձագանգը կը լինէր Եզնիկի «բնութիւնն» բառը, իսկ եթէ առարկուի, թէ Եզնիկը «բնութիւնն» բառով նկատի ունի «քարի բնութիւնը», ինչպէս Մարիէսն է կարծում, ապա կարելի է հրամարուել ()-ներում մեր գրած «ի բնութեանէ» բառից. մեր աւելացրած «քարինս» բառը բաւական էր, որպէսզի Եզնիկը նախադասութեան շարունակութեան մէջ գործածէր «բնութիւնն» գոյականը և մի տող յետոյ՝ սոր ի բնութեանն»:

Մարիէսը մեզ կ'առարկէր, թէ մեր սրբագրութիւնը կատարելիս մենք չենք պահպանել նման բառից նման բառին անցման նրա սիրած, բայց Եզնիկի բնագիրը սրբագրելիս ոչ միշտ կիրառած սկզբունքը: Կը պատասխանէինք, որ այդ սկզբունքը գրիչների բացթողումների պատճառներից մէկն է միայն, ոչ միակը: Այսօր ևս պատահում է, որ արտագրելիս կամ կարգադրիս բառեր կամ տողեր ենք բացթողնում, որոնք երբեմն նման չեն իրար:

Ինչպէս մեր Չրդ ծան. մէջ սկզբից ևեթ յայտնեցինք Եզնիկի պարբերութիւնը մէջ բերելիս, Մարիէսն էլ < > ներում միջնամտել է ձեռագրի բնագրին. տե՛ս վերևում: Այդ յաւելումը կատարելիս նա հիմք է ընդունել Մեթոդիոսի երկի համապատասխան տեղը. մանրամասն պատճառարանութիւնը տրուած է Եզնիկի գիտական հրատարակութեան 88րդ ծան. մէջ. «Մենք հարց ենք տալիս, թէ (Եզնիկի) մեզ հասած բնագրում «յուրիներն» և «ոչ» (բառերի) միջև արդեօք չեն ընկել մի քանի տող, որոնք կոյին սկզբնական բնագրում: Արդարեւ, յաւանարէնում Մեթոդիոսն այդ տեղում նախ ունի զիջական մի նախադասութիւն, ապա նա կանխում է մի ենթադրութիւն, որ արամիսասութեան երկարմաս (dualiste) զրուցակիցը կորսող էր արտայայտել: Արդ, այդ զիջումն ու ենթադրութիւնը իրենց համապատասխանը չունեն Եզնիկի մեզ հասած բնագրում: Սկզբնական բնագրում գրայն համապատասխանը պէտք է լինէր, որովհետեւ մի քիչ յետոյ, մեզ հասած բնագրում Եզնիկը, ինչպէս Մեթոդիոսը, ժխտում է այդ ենթադրութիւնը» (Եզնիկ, ծան. 88):

Մարիէսն իր De Deo ուշխման թեման մէջ (էջ 123) առաջրել է Մեթոդիոսի և Եզնիկի այդ համապատասխան տեղերը իր Ֆրանսերէն թարգմանութիւնում: Ի միջի այլոց ասենք, որ Եզնիկի տողերի նրա՝ այն մամուկական (1924) և 1959 թ. ի թարգմանութիւնները բառացի չեն համընկնում. նոյնը վերաբերում է նաև Մեթոդիոսի նրա թարգմանութիւններին: Մենք մեր ներթին, պահպանելով Մեթոդիոսի՝ Մարիէսի Ֆրանսերէն թարգմանութիւնը և Եզնիկի բնագիրը ներկայացնելով՝ տող առ տող զուգահեռում ենք ասորեւ երկու հեղինակներին, ոչ միայն որովհետեւ Մարիէսի առաջընթացն անյաջող է, այլև որպէսզի ընթերցողը ունի տակ առնելու երկու բնագրերը և ինքնուրոյն կարծիք կազմի և հետեւի մեր մտքերին:

ՄԵԹՈԴԻՈՍ

1. Nous voyons des hommes parmi nous qui font quelque chose de rien,
2. alors même qu'ils paraissent le faire avec quelque chose¹³.
3. Ainsi prenons comme exemple les architectes: ils font des villes de ce qui n'était pas des villes, et aussi des temples de ce qui n'était pas des temples.
4. Si, parce qu'ils travaillent sur des substances, tu penses qu'ils font ces oeuvres avec des choses existantes, tu te trompes¹⁵.
- 5.
6. Car ce n'est pas la substance que fait la ville ou les temples, mais l'art qui s'exerce sur la substance¹⁵.

(Մարիէս, De Deo, էջ 123)

ԵԶՆԻԿ

1. Նա և զմարդիկ տեսանեմք զի ի չգոյէ առնեն ինչ.
- 2.
3. որպէս շինուղքդ ոչ ի քաղաքաց քաղաքս առնեն, և ոչ ի տաճարաց տաճարս առնեն:
- 4.
5. Նոքա քանզի ամենեկին յոչնչէ (չ)կարեն ինչ առնել, քարինքն՝ զոր ի շինուածսն յաւերինեն, ոչ ևս քարինք կոչին, այլ կամ քաղաքք կամ տաճարք¹⁴.
6. զի ոչ եթե բնութիւնն զործէ քաղաքս կամ տաճարս, այլ արուեստն՝ որ ի բնութեանն է¹⁶:

(Եզնիկ, 17. 1-7)

Ի միջի ալլոց դարձեալ պէտք է անդրադառնանք Մարիէսի սըրբազրած ձեռագրային «չկարեն» բային (տե՛ս զուգահեռ 5): Սկզբից ևս թաւադրինք, որ այդ սըբազրութիւնն անելիս նա հիմք է ընդունել Մեթոդիոսի երկի համապատասխան տեղը. «(Մեթոդիոսի) յունարէն բնագրի հետ այս նախադասութիւնը համաձայնեցնելու համար պէտք էր իսկապէս ջնջել ժառանկան մասնիկը», գրել է նա իր De Deo աշխատութեան մէջ (էջ 125) և գիտական հրատարակութեան 87րդ ծան. մէջ վկայակոչել է այս: Արդ, մեր տողացի զուգահեռը (5րդ) ցոյց է տա-

¹³ Այս է այն վիճակն, որի վերաբերումն է, որ իր համապատասխանը չունի Եզնիկի երկում:

¹⁵ Սա այն ենթադրութիւնն է, որն իր համապատասխանը չունի Եզնիկի երկում: Զարմանում ենք, թէ ինչո՞ւ այս ենթադրութիւնն անողը սխալուած կը լինէր. միթէ շինարարները շինանիւթերից չեն շինում քաղաքներն ու տաճարները: Շարունակութեան մէջ Մեթոդիոսի երկի Ուղղափառն ասելու է, թէ ինչու այս ենթադրութիւնն անողը սխալուած է. տե՛ս 6րդ զուգահեռ: Բայց համոզի՛չ է՛ք:

¹⁴ Եզնիկի այս տողերը, հենց վիճարկութեան նիւթ տողերը անկախ են Մեթոդիոսի երկից. հետեւաբար նրանց բնագրային զտուարութիւնները չի կարելի լուծել Մեթոդիոսի յունարէն բնագրով:

¹⁵ Ըստ մեզ սա սխալ միտք է. առանց շինանիւթերի՝ արուեստը կամ արհեստագործն ի վիճակի չէ քաղաք կամ տաճարներ կառուցել:

¹⁶ Նկատենք Մեթոդիոսի և Եզնիկի մտքերի տարբերութիւնը. առաջինի մօտ՝ «substance», երկրորդի մօտ՝ «բնութիւն»:

լիս, որ Եզնիկի այն նախադասութիւնը, ուր գործածուած է «չկարեն» բայը, իր համապատասխանը չունի Մեթողիոսի յունարէն բնագրում, և հետեւաբար Եզնիկի նախադասութիւնը Մեթողիոսի երկին համապատասխանեցնելու մասին խօսք չի կարող լինել: Մեր առաջին զուգահեռ նախադասութիւններն են իրար համապատասխանում, ուր «առնել» բայը հաստատական է յունարէնում և Եզնիկի երկում:

Նկատի աւնենալով նաև Մեթողիոսի երկի և Եզնիկի մեր Չրդ և Քրդ զուգահեռները, Մարիէսը Եզնիկի «Նոքա քանզի ամենին յոչնչէ...» նախադասութեան մէջ < > ներում աւելացրել է «թեպէտ և շինուաղացք ընթերակաց իցեն՝ ընտելութիւնք զոր ի շինուածսն յաւրինեն» գիշական նախադասութիւնը, որ նա Եզնիկի սկզբնական բնագրից դուրս ընկած է համարում՝ նման բառից նման բառին անցման պատճառով՝ «յաւրինեն... յաւրինեն»: Նա Եզնիկի իսկական բառերը վերականգնած լինելու յաւակնութիւն չունի, բայց իր աւելացրած բառերն անհրաժեշտ է համարում Եզնիկի տրամաբանութեան կապակցեալութեան համար: Նրան այդպէս է թւում, որովհետև Եզնիկի «չկարեն» բայը դարձրել է հաստատական: Բայց Մարիէսը նկատել է արդեօք, որ Մեթողիոսի գիշական նախադասութիւնը մեր առաջին զուգահեռի շարունակութիւնն է կազմում և ոչ թէ Տրդի, որի գիմաց Մեթողիոսի երկում ոչինչ չկայ: Սակայն անկախ այս հանգամանքից, Մարիէսն ահա իր լրացումը կատարել է մեր Տրդ զուգահեռի մէջ: Մեթողիոսի երկում միև յանգում է առում, թէ մարդիկ ոչնչից բան են շինում («font quelque chose de rien»), իսկ Եզնիկի երկում երկու անգամ առում կը լինի, եթէ ընդունենք Մարիէսի «կարեն» սրբագրութիւնը: Ուստի եթէ Մարիէսն ուզում էր Եզնիկի բնագիրը սրբագրել ըստ Մեթողիոսի, ապա Մեթողիոսի գիշական նախադասութիւնը գրաբարով պէտք է արտայայտէր Եզնիկի ինչ զուգահեռի մէջ, այսինքն՝ «Նա և զմարդիկ տեսանեմք, զի ի չոյժե առնեն ինչ, < թեպէտ և շինաւղացք ընթերակաց իցեն բնութիւնք, զոր ի շինուածսն յաւրինեն >»: Այն ժամանակ մեր երկորոք զուգահեռում Մեթողիոսի նախադասութեան դիմաց տեղ կը գրաւէր Մարիէսի սրբագրութիւնը և, այդպիսով, Եզնիկն էլ արտայայտած կը լինէր Մեթողիոսի գիշական նախադասութիւնը:

Կամ Մարիէսն իր վերականգնած բառերը դնէր մեր Տրդ զուգահեռի մէջ ոչ թէ իր գրած տեղում, այլ այսպէս. «Նոքա քանզի ամենին յոչնչէ (չ)կարեն ինչ առնել, < թեպէտ և շինաւղացք... յաւրինեն >». այսինքն՝ «Դանի որ նրանք կարող են ամենին ոչնչից մի բան ստեղծել, < թէպէտ և շինարարներն առ ձեռն (կամ ընթերակաց) առնեն բնութիւններ (քարեր), որ ազուցում են իրենց շինուածքները >»: Մեղ թւում է, որ իր բառերը տեղաւորելիս Մարիէսը ձեռք զննել է իմաստին, նման բառից նման բառին անցման սկզբունքին՝ «... զոր ի շինուածսն յաւրինեն» < թեպէտ և շինաւղացք ընթերակաց իցեն բնութիւնք զոր ի շինուածսն յաւրինեն >»:

Ինչպէս տեսանք, Եզնիկի երկում պակասում են Մեթողիոսի գիշական նախադասութիւնը (Չրդ զուգահեռ) և առարկութիւնը, որին կանխում է Ուղղափառը (Քրդ զուգահեռ): Մարիէսն իր աւելացրած բառերով («թեպէտ և շինաւղացք ընթերակաց իցեն...») լրացրել է միայն գիշականի բացը: Իսկ առարկութիւն — ենթադրութիւնը, ինչով

նա այն էլ չի վերականգնել եղնիկի բնագրում: Արդեօ՞ք նրա համար, որ նման քառեց նման քառին անցման սկզբունքի կիրառութեամբ այն խցկելու տեղ չկար եղնիկի բնագրի մէջ: Եւ ընդհանրապէս հարց է առաջադրուած. ի՞նչն է եղել պատճառը, որ եղնիկը մի կողմէ թողել Մեթոդիսի այն սագերը, ուր արտայայտուած են Մեթոդիսի Ուղղափառի գիշտական եւ հակառակորդի առարկութեան կոնխումը, այսինքն՝ մեր Չրդ ու Գրդ զուգահեռները: Արդեօ՞ք դրա պատճառն այն չէ, որ եղնիկը նկատել է Մեթոդիսի այդ տողերում արտայայտուած մաքերի անհեթեթութիւնը. այն է՝ «Մեզանում մարդիկ կան, որոնք ոչնչից բան են շինում, նոյնիսկ երբ թւում է, թէ նրանք այդ շինում են ինչ—որ բանով» (զուգահեռ 1ին) եւ «Եթէ մարդկանց շինանիւթեր գործածելու պատճառով կործանւում ես, թէ նրանք այդ շինուածքները կառուցում են գոյութիւն ունեցող բաներով, սխալւում ես» (զուգահեռ 5րդ): Կասկած չկայ, որ եղնիկի պէս սղջամիտ փիլիսոփան պիտի չընդունէր նման անճիշտ մաքեր:

Վերեւում մէջ բերեցինք Մարիէսի 88րդ ծանօթագրութեան այն տողերը, ուր նա ասում է, թէ եղնիկի սկզբնական բնութեամբ պէտք է լինէին Մեթոդիսի գիշտական եւ ենթագրութիւն—առարկութեան համապատասխանը, եթէ ոչ եղնիկը Մեթոդիսի նման չէր գրի «... զի ոչ եթէ բնութիւնն գործէ քաղաքս կամ տաճարս, այլ արուեստն՝ որ ի բնութեանն է» (17. 6—7): Հետեւաբար Մարիէսը բառեր վերականգնելով եղնիկի բնագրում՝ նպատակ ունէր արդարացնել եղնիկի այս վերջին նախադասութիւնը: Բայց նկատել տուեցինք քիչ առաջ, որ նա բուն առարկութիւնը (զուգահեռ 4րդ) չի վերականգնել, որքան էլ դա նրան թուացել է, որովհետեւ 88րդ ծան. վերջում նա գրել է. «Յուրդ նախադասութիւնը (այսինքն՝ «զի ոչ եթէ բնութիւնն գործէ ... որ ի բնութեանն») ... անիմաստ կը լինէր, եթէ սկզբնապէս (Մեթոդիսի) հայերէն փոխադրութեան կամ թարգմանութեան մէջ մի քանի տող վերեւում խօսք չլինէր մի առարկութեան մասին, որ պէտք էր մերժել. այն է՝ թէ իբր քարերի բնութիւնն է շինում այդ քաղաքներն ու տաճարները»: Կրկնում ենք. իր վերականգնած բառերով Մարիէսը դեռեւս չի հասել եղնիկի վերջին նախադասութեան առկայութիւնն արդարացնելուն, որքան էլ նա իր վերականգնման մէջ գործածել է «բնութիւնը» բառը, որպէսզի հիմնադրած լինի եղնիկի վերջին նախադասութեան մէջ գործածուած «բնութիւնն» եւ «ի բնութեանն» բառերը: Վերեւում մենք ասացինք, թէ մեր սրբագրութեան մէջ վերապահութեամբ գործածեցինք «ի բնութիւնն» բառը, եւ թէ եղնիկի նախադասութեան «քարերն» գոյականը («ոչ ես քարից կոշիկն») բաւական էր, որպէսզի շարունակութեան մէջ եղնիկը գործածէր «բնութիւնն» բառը: Մենք հիմա համոզուած ենք, որ եղնիկի նախադասութեան մէջ տարբեր իմաստ ունեն «բնութիւնն» եւ «որ ի բնութեանն» է. եթէ դրանք մտայր բնութիւնն չեն նշանակում, ապա առաջինը = «քարը, քարը սրպէս բնութեան տարրերից մէկը», իսկ երկրորդը = «կառուցուածք, շինուածք, քաղաք, տաճար»: Վերջին իմաստը բխկնում ենք եղնիկի հետեւել նախադասութիւնից, որ վերեւում առիթ ունեցանք մէջ բերելու. «Այդ այնքան նման է, յորքան ի քարանց ոք շինուածս առնիցէ, պատշտեցոյն եւ յաւրինելոյն միայն արարիչ է, եւ ոչ բնութիւնն» (18. 24—25):

3. 4. Սկզբում եղնիկի մեր մէջ բերած պարբերութեան մէջ Մարիէսը «քարինքն» գոր ի շինուածսն յաւրինեն ... ոչ եւս քարինք

կոչիլի» նախադասութեան մէջ ձեռագրեր «ևս ու «կոչին» բառերի փոխարէն ընդունել է (89րդ ծան. մէջ նշելով) 1826 թ. հրատարակութեան «ևս ... կոչին» սրբագրութիւնը, որի մասին ոչինչ չունենք տեսել¹⁷:

5. 6. Ձեռագրի «բնութեան գործ է» բնթերցումը նոյն պարբերութեան մէջ (պի աչ կթե բնութիւն գործէ քաղաքս կամ տաճարս, այլ արուեստի՝ որ ի բնութեանն է») որ մտել է 1826 թ. հրատարակութեան մէջ, Մարիէսը դարձրել է այն, ինչ ընդգծեցինք այստեղ: Նա նշադրում է, թէ «բնութեան» բնթերցումը սխալ սրբագրութիւն է եղել ժամանակին այնպիսի մի ձեռագրից, որտեղ կարդացել են «գործ է»: Կամ այն համարում է «բնութիւն» (բնութիւն)՝ յապուման սխալ, այսինքն՝ «բնութեան» մեկնաբանութիւն: Իր սրբագրութիւնը կատարելիս Մարիէսը նկատի է ունեցել նաև ձեռագրի «արուեստին» ուղղակիանը նոյն նախադասութեան մէջ, որ 1826 թ. հրատարակութեան մէջ «արուեստին» է և նրանից յետոյ է դրւում ձեռագրում նախադասութեան վերջում գտնուող «է»ն. այսինքն՝ պի աչ կթե բնութեան գործ է քաղաքս և տաճարս, այլ արուեստին է՝ որ ի բնութեանն ու Գր. Գորիսի քերականը ստիպում է եղել «տաճարս» հայացանից յետոյ հնարքով: «չինել» բայը Արուստ սրբագրութիւնները նշանակութիւն չունեն Եզնիկի նախադասութեան իմաստի առանկէտից. վնասակի բառատարակութեան «է» բայն «արուեստին» սեռական — արականից յետոյ ի հարկէ աւելորդ է. առանց դրան էլ Եզնիկի «պի աչ կթե բնութեան գործ է քաղաքս կամ տաճարս (չինել) այլ՝ արուեստին» նախադասութիւնը կանոնաւոր կը լինէր: Կարելի է հրաժարուել նաև «չինել» բայից. մեր կարծիքով առանց դրան էլ միտքը հասկանալի է, այդ բայը լեւելիս իմացում է: Եթէ թողնենք ձեռագրի «բնութեան գործ է» բնթերցումը, ստիպում ենք պիտի լինենք «արուեստին» ուղղակիանը դարձնել «արուեստին» որպէս «բնութեան» հոլովածին համադաս: «Արուեստին» հոլովածին ին կարող էր ընկնել յաջորդող «(որ) ի» ազդեցութեամբ: Այդպիսով մէկ սրբագրութիւն կատարած կը լինէինք, իսկ Մարիէսը կատարել է երկուսը՝ «բնութեան» — բնութիւն. գործ է — գործէ: Պէտք է դատական գրաբարում վկայութիւններ որոնել և հաստատել, թէ կարելի է ասել արդեօք «գործել քաղաք կամ տաճար», այսինքն՝ «գործել» բայը կարող է նշանակել «չինել, կառուցել»: Եթէ չի կարող, ապա Մարիէսի սրբագրութիւնը մերժելի է: Եթէ կարող է, Մարիէսի սրբագրութիւնը կարելի է սխալ չհամարել:

7. 8. Սկզբում մեր մէջ թերած պարբերութեան վերջում Մարիէսի կատարած սրբագրութիւններից են նաև վերջին <> ներում աւելացւած բառերը նախ՝ դարձեալ Եզնիկի բնագիրը Մեթոդիոսի երկի համապատասխան տեղին համաձայնեցնելու համար և, բացի դրանից, որովհետև առանց նրա աւելացրած բառերի՝ Եզնիկի ձեռագրում ստացւում է «եւ արուեստն ոչ կթե յենթերակացէ ինչ իւրեք որ ի բնութիւնն իցէ <> առնու զարուեստիսութիւնն, այլ ի դիպացն որ դիպին ի բնութեանն»: Նա իրաւամբ աւարկում է, թէ «արուեստն ... առնու զարուեստիսութիւնն» տարօրինակ է: Ձեռագրի «իմեքէ» բառը կարդալով «իմեք է» և «ոչ կթե»ն առանց «այլ»ի էլ գործածելի հա-

¹⁷ Միայն աւելացնենք, որ Մարիէսը լռել է 1928 թ. իր «Noms et verbes d'existence chez Ezriq» աշխատութեան մէջ (էջ 77, ծան. 1) առաջարկած ոչ և քարինք ոչ են աւարդինակ սրբագրութեան մասին:

մարելով՝ նա առանձին նախադասութիւն է դարձրել «Եւ արուեստն ոչ եթէ յընթերակացէ ինչ իմեք է՝ որ ի բնութիւնսն իցէ» բառերը: «Իմեք» բացատկանի համար նա վկայակոչել է, Մեկէի օրինակով, Եզնիկի «յաներեւութէ իմեք» բառերը (էջ 47.2): Բայց պէտք է այլ վկայութիւններ գտնել այս բացատկանի օգտին, որ կարող է Եզնիկի ձեռագրի այդ երկու տեղում, մանաւանդ վերջինում գրչագրական վրիպակ լինել: Նա գրել է նաեւ, ծան. 9), թէ «ոչ եթեան կարող է գործածուել առանց «այլ»ի, և բերել է Ղուկասի աւետարանից մի օրինակ (Ձ. 44, «ոչ եթէ ի փշոց քաղեն թուզ և ոչ ի մորենւոյ կթեն խաղող»): Պարծեալ պէտք է գտնել Եզնիկի երկում այլ վկայութիւններ ևս՝ վստահ լինելու համար: «Արուեստն ... առնու զարուեստգիտութիւնն» տարօրինակութիւնը վերացնելու նպատակով փոխանակ մտողջ մի նախադասութիւն աւելացնելու, ուր կրկնուած է, թէ «արուեստն ոչ եթէ յընթերակացէ ինչ իմեք է», կարելի էր «արուեստն» բառը դարձնել «արուեստագէտն»: Այդպիսով կը ստացուէր հետեւեալը. «Եւ արուեստ(ագէտ)ն ոչ եթէ յընթերակացէ ինչ իմեք, որ ի բնութիւնսն իցէ, առնու զարուեստգիտութիւնն, այլ ի դիպացն, որ դիպին ի բնութեանցն, քանզի»¹⁶ ոչ եթէ ակնհայտ ինչ յանձնաւորաց զարուեստն կարէ (ոք) ցուցանել, այլ ի դիպացն, որ դիպինն»: Այսպիսով ստացուած բնագիրը կը լինէր թէ՛ Մեթոդիոսի երկին համապատասխան, բայց համառօտուած, ինչպէս Եզնիկը յաճախ անում է այդ աղբիւրից օգտուելիս, թէ՛ պահպանուած կը լինէր ձեռագրի «իմեքէ» ընթերցումը, թէ՛ վերացած կը լինէր «արուեստն առնու զարուեստգիտութիւնն» տարօրինակութիւնը, և թէ՛ մեր ընդգծած «կարէ» բայի ենթական կը լինէր «արուեստագէտն» գոյականը, ինչպէս պահանջում է Մարիէսը (ծան. 52): Մենք փակագծերում դրեցինք «ոք» դերանունը, որ չկայ սակայն ձեռագրում: այդպէս էլ կարելի է հասկանալ Եզնիկի միտքը, բայց դերանունը ձեռագրից դուրս ընկած համարելով: Ձեռագրում մեր ընդգծած «անձնաւոր» բառը գրուած է «անձնաւորէ»: Ո՞վ գիտէ, թերեւս մեր ենթադրած «ոք» սկզբնապէս այստեղ էր՝ «քանզի ոչ եթէ անձնաւոր (ոք) ինչ յանձնաւորաց զարուեստն կարէ ցուցանել»:

Ծրուալիւմ

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

¹⁶ Սկզբում մէջբերուած պարբերութեան շարունակութիւնն է այս նախադասութիւնը: